ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«09» 08 2024 թ.
№ 942/1277

«Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ի տնօրեն
Վ. Մարգարյանին
ՀՎՀՀ 01064814
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Թևոսյան 14/2
հեռ. 093-62-62-25

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ն հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ն որոշ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ի միջև 11.04.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-24-1/1-4 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ «Մեգա Էներգո» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00170838) 2022 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 15-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի և «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Վահե Ռոբերտի Մարգարյանը հանդիսանում է նաև «Մեգա Էներգո» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ի միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-1/1-4 գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. օգոստոսի 9-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 618 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. օգոստոսի 19-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարը, ապա «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2024թ. օգոստոսի 19-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ի միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-1/1-4 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով ապրանք ձեռքբերելու դեպքում «Էներգոկոմպլեկտ» ՍՊԸ-ն պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ